

Բանկերի գործարար շրջանառության սովորույթը՝ կապված հոգուտ երրորդ անձի ավանդի պայմանագրի ձևի հետ



Համաձայն «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի (հոդված 14, 3-րդ կետ)՝ Հաշտարարը որոշում կայացնելիս հաշվի է առնում ոչ միայն ՀՀ օրենսդրության պահանջները, այլև գործարար վարքագծի և էթիկայի կանոնները, գործարար շրջանառության սովորույթները: Բանկերում գործող գործարար շրջանառության սովորույթ ճշտելու անհրաժեշտություն է առաջացել նաև Հաշտարարի գրասենյակում ՀՀ-ում գործող բանկերից մեկի դեմ ուղղված պահանջը քննելու ժամանակ:

Պահանջի էությունը կայանում էր հետևյալում. Ա-ն գումար է տվել Բ-ին՝ նրան խնդրելով, որ իր անվամբ հաշիվ բացի բանկում՝ առանց Բ-ին լիազորագիր տալու: Բ-ն ցպահանջ ավանդիպայմանագիր է կնքել բանկի հետ, որտեղ որպես ավանդատու նշված է Ա-ն, սակայն պայմանագրում ավանդատուի անվան տակ որևէ ստորագրություն չկա: Այլ կերպ ասած՝ ավանդային պայմանագրի կողմեր նշված են բանկը և Ա-ն, սակայն պայմանագիրը Ա-ի կողմից չի ստորագրվել. միայն պայմանագրի՝ կողմերի ստորագրության համար նախատեսված տեղում Բ-ն նշվել է որպես գումարը մուծող և ստորագրել է պայմանագիրը: Բանկը հաշվի պայմանագիր նույնպես չի կնքել, և ավանդային հաշիվ բացվել է Ա-ի անվամբ՝ վերոնշյալ ավանդային պայմանագրով: Ա-ն, դիմելով Հաշտարարին, պահանջ է ներկայացրել բանկի դեմ, որը, նրա կարծիքով, առանց իր համաձայնության իր անվամբ բացված հաշվին մուտքագրված գումարը տվել է Բ-ին: Իսկ բանկը նշել է, որ իր և Բ-ի միջև կնքվել է հոգուտ երրորդ անձի ավանդային պայմանագիր, և քանի որ Ա-ն չի հայտնել ավանդատուի իրավունքներից օգտվելու իր մտադրության մասին, բանկը ներդրված գումարը Բ-ի պահանջով տվել է նրան:

ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 446 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հոգուտ երրորդ անձի է համարվում այն պայմանագիրը, որում կողմերը սահմանել են, որ պարտապանը պարտավոր է պարտավորությունը կատարել ոչ թե հոգուտ պարտատիրոջ, այլ՝ պայմանագրում նշված կամ չնշված երրորդ անձի, որն իրավունք ունի պարտապանից պահանջել իր օգտին կատարելու պարտավորությունը: Եթե ղեկավարվելու լինենք նշված հոդվածով, ապա հոգուտ երրորդ անձի կնքված պայմանագիրը պետք է քննարկվող դեպքում

ստորագրվեր բանկի և Բ-ի միջև, և որպես երրորդ անձ՝ նշվեր Ա-ն: Սակայն բանկը պնդում էր, որ եթե գումարը բանկի դրամարկղ մուտք է արվում Բ-ի կողմից և ավանդային պայմանագրում Բ-ն նշվում է որպես գումար մուծող և ստորագրում է, ապա բանկային պրակտիկայում դա համարվում է հոգուտ երրորդ անձի ավանդային պայմանագիր՝ անկախ նրանից, որ պայմանագրում որպես ավանդատու նշված է Ա-ն: Հաշվի առնելով նշվածը՝ բանկային համակարգում գործարար շրջանառության սովորույթը բացահայտելու համար Հաշտարարը խնդրել է բոլոր բանկերի կարծիքը և մոտեցումը հետևյալ հարցերի վերաբերյալ.

1. Արդյո՞ք բանկի և Բ-ի միջև կնքվել է հոգուտ երրորդ անձի պայմանագիր, թե ոչ. եթե ոչ, ապա ինչպիսի՞ պայմանագիր է կնքվել քննարկվող դեպքում,
2. Արդյո՞ք բոլոր բանկերի կողմից հոգուտ երրորդ անձի ավանդային պայմանագիրը նույնպես կնքվում է նման կերպ, թե ոչ. Հաշտարարը բանկերին խնդրել է ներկայացնել, թե ի՞նչպես/ի՞նչ ընթացակարգով է կնքվում հոգուտ երրորդ անձի ավանդային պայմանագիրը, մասնավորապես՝
3. ովքե՞ր են հանդիսանում պայմանագրի կողմեր, ք) արդյո՞ք հոգուտ երրորդ անձի ավանդային պայմանագրում անպայման նշում է արվում, որ այն
4. հոգուտ երրորդ անձի ավանդային պայմանագիր է, և նշվում է երրորդ անձի անունը, թե ոչ,
5. արդյո՞ք Բ-ն կարող է առանց լիազորագրի Ա-ի անվամբ բացել ցպահանջ ավանդային/բանկային հաշիվ, գումար մուտք անել այդ հաշվին, այնուհետև այդ գումարը ելք անել առանց հաշվետիրոջ՝ Ա-ի համաձայնության:

Բանկերից ստացված կարծիքները ձևավորել են գործարար շրջանառության սովորույթ, քանի որ գրեթե բոլոր բանկերը դրսևորել են նույնանման մոտեցում. մասնավորապես՝ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 446 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հոգուտ երրորդ անձի է համարվում այն պայմանագիրը, որում կողմերը սահմանել են, որ պարտապանը պարտավոր է պարտավորությունը կատարել ոչ թե հոգուտ պարտատիրոջ, այլ՝ պայմանագրում նշված կամ չնշված երրորդ անձի, որն իրավունք ունի պարտապանից պահանջել իր օգտին կատարելու պարտավորությունը: Նույն օրենսգրքի 910 հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ ավանդը կարող է ներդրվել բանկ որոշակի երրորդ անձի անունով:

Նման անձն ավանդատուի իրավունքներ ձեռք է բերում բանկին այդ իրավունքների վրա հիմնված առաջին իսկ պահանջը ներկայացնելու կամ այդ իրավունքներից օգտվելու իր մտադրության վերաբերյալ որևէ այլ եղանակով բանկին տեղեկացնելու պահից, եթե այլ բան նախատեսված չէ բանկային ավանդի պայմանագրով: Բանկային ավանդի համապատասխան պայմանագրի էական պայմանը քաղաքացու անվան կամ իրավաբանական անձի անվանման նշումն է, որի օգտին ներդրվում է ավանդը: Նույն հոդվածի երրորդ մասի համաձայն՝ հոգուտ երրորդ անձի՝ պայմանագրի մասին կանոնները (հոդված 446) կիրառվում են հոգուտ երրորդ անձի բանկային ավանդի պայմանագրի նկատմամբ, եթե դա չի հակասում սույն հոդվածի կանոններին և բանկային ավանդի էությանը: Սրանից հետևում է, որ հոգուտ երրորդ անձի՝ պայմանագրի ձևին վերաբերող հոդված 446-ով սահմանված կանոնները պետք է տարածվեն նաև հոգուտ երրորդ անձի ավանդային պայմանագրի վրա, այն է՝ հոգուտ երրորդ անձի ավանդային պայմանագրում որպես կողմեր պետք է հանդես գան գումարը բանկի դրամարկղ մուտք անող քաղաքացին, որը և հանդիսանում է ավանդատու, իսկ երրորդ անձին ի օգուտ Բանկի՝ գործողություններ կատարելու մասին դրույթները պետք է պարտադիր նշվեն պայմանագրում, բացառությամբ այն դեպքերի, երբ գումարը բանկի դրամարկղ մուտք անող քաղաքացին օրենքի կամ համապատասխան փաստաթղթի՝ լիազորագրի, պայմանագրի և այլն, հիման վրա հանդես է գալիս որպես մեկ այլ անձի ներկայացուցիչ. այդ դեպքում միայն պայմանագրի կողմ, հետևաբար՝ նաև ավանդատու, կարող է հանդես գալ ներկայացվողը: Ինչ վերաբերում է մեկ անձի կողմից այլ անձի անվամբ հաշիվ բացելուն, ապա գրեթե բոլոր բանկերը նշել են, որ հաշիվը բացվում է բացառապես գումարը ներդնողի անունով, նույնիսկ հոգուտ երրորդ անձի ավանդային պայմանագրի դեպքում, կամ բացառապես լիազորագրի հիման վրա: